ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Մարդկային հասարակության ձևավորման վաղնջական ժամանակներից սկսած՝ մարդկությանը հուզող հիմնահարցերից թերևս ամենաարդիականը եղել և մնում է մարդկային տեսակի՝ միասին ապրելու, արարելու ու համակեցության ընդհանուր կանոնների փնտրտուքը: Այդ իսկ պատճառով ամենևին պատահական չէ, որ հասարակական-քաղաքական մտքի դրսևորման պատմական բոլոր ժամանակաշրջաններում այդ թեման դարձել է դիսկուրսի առարկա:

Տեսական առումով քաղաքական երկխոսության հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրումը նախևառաջ անհրաժեշտ է դիտարկել այդ հասկացության բովանդակային լայն ընդգրկման համատեքստում: Իսկապես, «երկխոսությունը» տարողունակ հասկացություն է, որն օգտագործվում է տարբեր իմաստներով՝ և՛ որպես լեզվական շփման ձև՝ զրույց վարելու եղանակ, և՛ որպես գրական-ստեղծագործական ժանր, և՛ որպես փիլիսոփայության մեթոդ, և՛ որպես քաղաքական հաղորդակցման տարատեսակ: Օրինակ՝ լեզվաբանական բառարաններում երկխոսությունը սահմանվում է նեղ առումով. այն մի գործընթաց է, որի ժամանակ յուրաքանչյուր արտահայտություն ուղղակի հասցեագրվում է զրուցակցին և սահմանափակվում է խոսակցության թեմատիկայով[1]: Այս սահմանումը թեև ինչ-որ չափով անորոշ է, այնուամենայնիվ այստեղ կարելի է առանձնացնել երկխոսութային հարաբերություններին բնորոշ առնվազն երկու կարևոր բաղադրատարր՝ հասցեատիրոջ առկայությունը, որին ուղղվում է խոսքը, և քննարկման ընդհանուր թեմատիկան, ինչի շուրջ ընթանում է երկխոսությունը: Հետագայում լույս տեսած բառարանները տալիս են երկխոսության հաղորդակցական ներուժը բացահայտող ավելի հստակ սահմանումներ, որտեղ արդեն կարևորվում է ընկալման հիմնախնդիրը: Մասնավորապես, 1990 թ. հրատարակված «Լեզվաբանական հանրագիտարանային բառարանում» երկխոսությունը սահմանվում է որպես խոսքի ձև՝ բաղկացած արտահայտություն-ռեպլիկներից, որոնց լեզվական բաղադրության, ինչպես նաև հասցեագրողի խոսակցական գոր-

[1] Տե՛ս «Словарь лингвистических терминов» (под ред. Ахмановой О. С.), М., 1969, էջ 132:

ծունեության վրա ուղղակի ազդեցություն են թողնում հասցեատիրոջ կողմից դրանց անմիջական ընկալումը և երկխոսողների միջև առկա բովանդակային և կառուցողական կապերը[2]: Բացատրական բառարաններում գերակշռող է «երկխոսություն» հասկացության հետևյալ ընկալումը. դա երկու անձանց կամ խմբերի միջև զրույց, խոսակցություն է[3], բանավոր խոսքի ձև[4]: Այս մոտեցման ակունքը թերևս հին հունարեն διάλογος – dialogos բառն է, որը թարգմանվում է որպես երկու անձանց միջև խոսակցություն, քննարկում: Չնայած այդ բառում առանձնացվում է երկու բաղադրիչ՝ «dia», որը նշանակում է միջով և ոչ թե երկու, ինչպես ընդունված է կարծել, և «logos», որը բացատրվում է «խոսք, իմաստ, զրույց»[5]: Հետևաբար, երկխոսությունն այս դեպքում կարելի է մեկնաբանել ոչ թե զուտ որպես խոսակցություն կամ զրույց, այլ կողմերի փոխըմբռնմանն ու համաձայնությանը միտված խոսք:

Որպես զրույցի վարման եղանակ ու փիլիսոփայական մեթոդ՝ երկխոսության ուսումնասիրման տեսական ակունքները սկիզբ են առնում հին հունական հասարական-քաղաքական մտքից, որտեղ երկխոսությունը և դրա մասին տեսությունն ու հռետորական արվեստը հասցված էին կատարելության, ինչն այդ քաղաքակրթության մեծագույն ձեռքբերումներից է, մարդկանց միմյանց հետ շփվելու բնական պահանջի բարձրագույն դրսևորում[6]:

Երկխոսության՝ որպես փիլիսոփայական մեթոդի ու ստեղծագործական ժանրի առաջացումը որոշակիորեն կարելի է կապել սոփեստական դպրոցի գործունեության հետ, որի շնորհիվ փիլիսոփայությունն էլ ավելի հանրայնացվեց՝ «դպրոցից հրապարակ դուրս գալով»[7]: Իհարկե, այդ անցումը մեծապես պայմանավորված էր նաև հին հունական պոլիսների քաղաքական և մշակութային գործունեության ակտիվացմամբ: Վ. Եսենգալիևան նշում է, «Սոփեստները շատ լավ էին գիտակցում երկխոսության և ընդհանրապես պերճախոսության հզոր ուժը, որ նա, ով տիրապետում է այդ արվեստին, տիրապետում է նաև իր ժամանակի մտքին ու զգացմունքներին: Լինել ինքնին խելացի և բանիմաց դեռ ոչինչ չի նշանակում, իսկ այլոց համոզելը, վստահեցնելն ու ներշնչելու կարողությունն է իսկական արվեստ. սա էր սոփեստների հավատամքը»[8]: Հետագայում արդեն «սոփեստ», «սոփեստություն» հասկացությունները

---

[2] Տե՛ս «Лингвистический энциклопедический словарь» (под ред. Ярцева В. Н.), М., 1990, էջ 135:

[3] Տե՛ս **Ефремова Т. Ф.** Новый словарь русского языка. М., 2000 [www.efremova.info/world/dialog]

[4] Տե՛ս «Большой энциклопедический словарь» (под ред. Прохорова А. М.), М., 2002, «Малый академический словарь» (под ред. Евгеньева А. П.), М., 1957-1984:

[5] «Понятие диалог и различные подходы к изучению диалогической речи» [http://www.grandeducator.ru /gamivs-314-1.html]

[6] Տե՛ս **Есенгалиева В. А.** Возвращаясь к теории античного диалога. [library.wkau.kz/index.php?option=com_docman...doc]

[7] Նույն տեղում:

[8] Նույն տեղում:

բացասական երանգավորում ստացան նրանց մեծամասնության՝ տրամաբանական ու լեզվական աճպարարությունների միջոցով բացառապես հաղթանակի հասնելու միտվածության պատճառով[9]:

Հին հույներից առաջինը Պրոտագորասն էր, որ օգտագործեց երկխոսությունը որպես հրապարակային խոսքը ներկայացնելու, որպես մարդկանց համոզելու ու իրականությունը սուբյեկտիվ ընկալելու եղանակ: Նա քարոզում էր, որ ճշմարտության բարձրակետը մտածող մարդն է, ու հենց նա է ամեն ինչի չափանիշը[10]: Արիստոտելի վկայությամբ երկխոսությունը՝ որպես փիլիսոփայական ժանր, առաջինը կիրառել է Ալեքսամանդրես Ստիրիացին[11]:

Չնայած սոփեստության որոշ դրական ազդեցությանը, այնուամենայնիվ այն համաշխարհային հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ ավելի շատ հիշատակվում է բացասական իմաստով, քանի որ սոփեստների հիմնական նպատակը ոչ թե ճշմարտության բացահայտումն էր, այլ հրապարակային բանավեճերում ամեն գնով հաղթելու ձգտումը, որն էլ երկխոսությունը վերածեց էրիստիկայի[12]՝ ընդդիմախոսին ամեն գնով հաղթելու մոլուցքի: Եթե սոփեստների շրջանում գերակշռում էր երկխոսություն վարելու էրիստիկական ոճը, ապա Սոկրատեսից սկսած՝ որոշակիորեն փոփոխության է ենթարկվում երկխոսության փիլիսոփայությունը՝ դառնալով ոչ միայն ժամանակի հասարակական-քաղաքական մտքի արտահայտման ամենատարածված ձևը, այլ նաև շրջապատող աշխարհի ու մարդու ինքնաճանաչման նոր չափում[13]: Ինքը՝ Սոկրատեսը, իր նոր մեթոդը անվանում էր «մանտիկա» կամ «մանկաբարձուհու արվեստ», որի օգնությամբ ծնվում էր իմաստությունն ու ճշմարտությունը[14]: Ըստ Սոկրատեսի՝ երկխոսության միջոցով բացվում է ոչ միայն ուրիշի, այլ նաև սեփական հոգին: «Եթե աչքը ցանկանում է իրեն տեսնել, ապա պետք է նայի ուրիշի աչքի մեջ.....Նմանապես էլ հոգին եթե ցանկանում է ինքն իրեն ճանաչել, պետք է նայի այլ հոգու մեջ, հատկապես նրա այն մասի մեջ, որտեղ թաքնվում է հոգու արժանապատվությունը՝ իմաստությունը»[15]: Սոկրատեսյան երկխոսությունն այսպիսով ճանապարհ է հարթում մարդկանց՝ ավելի լավը դառնալու ու միմյանց հետ բարոյական հարաբերություններ հաստատելու համար: Իսկ երկխոսության արվեստի՝ դիալեկտիկայի իմաստը բարոյականության քարոզն է, որին

---

[9] Տե՛ս «История политических и правовых учений» (под общ. ред. Нерсисянца В. С), М., 4-ое издание, 2004, էջ 50:

[10] Տե՛ս **Назарчук А. В.** Философское осмысление диалога через призму коммуникативного подхода. // Вестник МГУ, серия 7 (философия), 2010/1, էջ 52:

[11] Տե՛ս նույն տեղը:

[12] Տե՛ս «Философия: Энциклопедический словарь» (под ред. Ивина А. А.), М., 2004 [www.dic.academic.ru/dic.nsf/philosophy/1430/ЭРИСТИКА]

[13] Տե՛ս **Назарчук А. В.,** նշվ. աշխ.:

[14] Տե՛ս «Փիլիսոփայական բառարան» (խմբ. Մ. Ռոզենտալի), Եր., 1975, էջ 379:

[15] Հղումն ըստ՝ **Назарчук А. В.,** նշվ. աշխ., էջ 53:

պետք է ձգտի յուրաքանչյուր մարդ. սա է, ըստ էության, սոկրատեսյան երկխոսությունների գլխավոր նպատակը:

Եթե Սոկրատեսը երկխոսությունը մեծ մասամբ կիրառում էր որպես դիսկուրս վարելու ու փիլիսոփայական կենդանի շփման եղանակ, ապա Պլատոնը, ըստ Ա. Նազարչուկի, երկխոսությունն օգտագործելով իր ստեղծագործություններում, այն հասցրեց գրական կատարելության[16]: Պլատոնի երկխոսություններում նկատվում է զրույց վարելու ավելի փափուկ ու բարյացակամ ոճ: Չնայած այն հանգամանքին, որ երկխոսության կողմերը կարող են ունենալ ու պաշտպանել իրարամերժ տեսակետներ, սակայն վերջում նրանք գալիս են ընդհանուր հայտարարի, որտեղ չկան պարտվողներ (ինչպես օրինակ՝ սոփեստների դեպքում), այլ կան համատեղ ուժերով ճշմարտության որոնման ձգտում և համաձայնություն: Իհարկե, հին հունական դեմոկրատիայի տիրապետության ժամանակաշրջանը, որում ապրել և ստեղծագործել են Սոկրատեսը, Պլատոնն ու Արիստոտելը, ամենևին էլ իդեալական շրջան չէր: Դեռ ավելին, այդ ժամանակահատվածը (մ.թ.ա. V-IV դարեր) որոշ հեղինակներ համարում են աթենական հասարակության սոցիալ-քաղաքական համակարգի փոփոխման ու արժեքների որոշակի փոխակերպման դարաշրջան, երբ նախկին հերոսական իդեալները՝ պարզ, գեղեցիկ ու միաժամանակ խիստ, արդեն մոռացության էին մատնվում: Դրանց փոխարինելու էին գալիս ծայրահեղ անհատապաշտությունը, անսահման եսասիրությունն ու իշխանության տենչը: Պատահական չէ, որ Պլատոնը նույնպես իրավամբ դրսևորում է որոշակի զգուշավորություն հին հունական դեմոկրատիայի, հունական հասարակության՝ բովանդակային ասպեկտների փոխարեն երկխոսության արտաքին, ձևական կողմին նախապատվություն տալու հակվածության նկատմամբ, երբ առավելությունը տրվում էր պաթետիկ ոճով ու գեղեցիկ շարադրված մտքին, այլ ոչ թե բովանդակությանը: Թերևս տեղին է հիշատակել, որ մեր օրերում նույնպես, երբ ժողովրդավարական արժեքների պատեհ ու անպատեհ թմբկահարումը, խորհրդարանական ու այլ հրապարակային ամբիոններից հնչող ամբոխահաճո խոսքերն ու ելույթները լցրել են քաղաքական հաղորդակցման ողջ դաշտը, քաղաքական երկխոսության բովանդակային հայեցակետերը հետին պլան են մղվում՝ փոխարինվելով այդ երևույթի ընկալման ձևական ու մակերեսային կողմերով:

Պլատոնի ժամանակ հին հունական հասարակությունը փոխակերպման փուլում էր: Դասական ստրկատիրական տիպի աթենական պետությունը վարում էր թալանչիական պատերազմներ, նորանոր տարածքների նվաճման ու ստրուկների թվաքանակի ավելացման քաղաքականություն[17]: Ակնհայտ է, որ հասարական-քաղաքական համակար-

---

[16] Տե՛ս նույն տեղը:

[17] Տե՛ս **Лосев А. Ф**. Комментарии к диалогам Платона [www.psylib.net/books/losew06/txt00.htm]

գի փոփոխությունը, արժեքային ու աշխարհայացքային փոխակերպումները այն ժամանակվա մտածողների մոտ հարցեր էին առաջացնելու, հարցեր՝ բարու և չարի, արդարացի կառավարման, համընդհանուր բարիքի, համակեցության միասնական կանոնների մշակման մասին և այլն: Եվ այդ համատեքստում հենց երկխոսութային մտածողությունն է, որ գալիս է օգնության. հարց-պատասխան կառուցակարգի միջոցով բացահայտել ճշմարտությունը, փնտրել և գտնել նոր իրողություններին համապատասխան ճշմարտություններ, հարմարվել նոր պայմաններին կամ այլ կերպ ասած՝ փոխակերպվել: Որքանով դա հաջողվեց Սոկրատեսին՝ ցույց տվեց ժամանակը. ժամանակն ու բարքերը սպանեցին այդ մեծ փիլիսոփային: Պլատոնն էլ այդ ամենի ականատեսն էր և լավ էր գիտակցում, թե ինչ կործանարար հետևանքներ կարող է ունենալ դեմոսի կառավարման բացարձակացումը, թե ինչու չպետք է դեմոսը մասնակցի պետության կառավարման գործերին, թե ինչու է դեմոկրատիան վատագույն կառավարման համակարգ, որ միայն սեփական շահերով առաջնորդվող գերեսասեր անհատները ի վերջո կործանում են և՛ իրենց, և՛ հասարակությունը: Այդ պարագայում, թերևս, անհրաժեշտություն է առաջանում երկխոսության մեթոդին դիմելու ոչ միայն իմացաբանական (որպես ճշմարտությունը ճանաչելու հասանելիության եղանակ) տեսանկյունից, այլ նաև գոյաբանական առումով՝ որպես հասարակականքաղաքական միջավայրում մարդկանց համատեղ կյանքի ապահովման, միմյանց շահերի ու պահանջմունքների բավարարման ու համաձայնեցման առավել ընդունելի ու քաղաքակիրթ եղանակ: Հենց այս համատեքստում պետք է դիտարկել նաև արիստոտելյան հանրահայտ ձևակերպումը, որը մարդուն սահմանեց որպես «հասարակական» կամ «քաղաքական» կենդանի՝ դրանով իսկ շեշտադրելով մարդու սոցիալական ես-ը՝ իր նմանների հետ հարաբերվելու ու համատեղ գոյակցություն ապահովելու հրամայականը: Անժխտելի է, թերևս, մարդու ինքնության բնութագրիչների շարքում միմյանց հետ հաղորդակցվելու, համատեղ գործունեություն իրականացնելու, դիմացինին ընկալելու և ընկալված լինելու և, ի վերջո, փոխադարձ համաձայնության գալու բնական պահանջի կարևորությունը, որն Արիստոտելը համարում էր մարդկային էակների բարձրագույն բնական նպատակը: Հայտարարելով, որ մարդն իր բնույթով «քաղաքական կենդանի» է, նա դրանով ընդգծում էր մարդկանց համատեղ ապրելու, գործունեություն ծավալելու և ստեղծագործելու բնական պահանջի կարևորությունը մարդածին գործոնների շարքում: Իսկապես, հին հույների երկերում երկխոսության ու քաղաքական գործունեության կապը բավականին հստակ է երևում, և այդ կապակցությամբ, ինչպես դիպուկ նշում է Ս. Պոցելուևը, «Հին հույները սերտորեն շաղկապում էին երկխոսությունն ու քաղաքականությունը. վերջինս գոյատևում է երկխոսության հաղորդակցական տարերքի մեջ»[18]:

[18] **Поцелуев С.** Диалог как властная стратегия. // Философия права. 2009/2. с. 57.

Այսպիսով, կարելի է փաստել, որ հին հույների համար երկխոսությունը մտածողության ձև էր, անտիկ հոգևոր մշակույթի անքակտելի մաս էր, որը հենվում էր կարծիքների բազմազանության, տարբեր տեսակետների գոյության իրավահավասարության, անձի ու հասարակության ազատության արժեքային բարձրագույն կողմնորոշման գաղափարների վրա: Բացի այդ, երկխոսությունը ժամանակի տեսական ընդհանրացումների իրականացման հիմնական ու ամենատարածված մեթոդն էր: Պատահական չէ, որ հին հունական հասարակական - քաղաքական միտքը զարգանում էր հենց երկխոսութային մտածողության, մտքերի ու տեսակետների շարադրման, դրանց հիմնավորման, մերժման ու փաստարկման երկխոսութային տեխնոլոգիաների ակտիվ կիրառման շնորհիվ: Իսկ երկխոսության անտիկ ընկալումը միաժամանակ պարունակում էր շրջապատող աշխարհի ճանաչման և՛ իմացաբանական, և՛ գոյաբանական տարրեր՝ որպես մարդկանց շահերի ու պահանջմունքների համաձայնեցման ու համատեղ գոյակցության ապահովման հաղորդակցական ամենաարդյունավետ ու քաղաքակիրթ մեխանիզմ: Մենք հակված ենք անտիկ երկխոսություններում տեսնելու նաև մարդկությանն ուղղված այս թաքնահարույց կոչ-ուղերձը:

Բանալի բառեր – *երկխոսություն, երկխոսութային մտածողություն, երկխոսության փիլիսոփայություն, էրիստիկա, հունական դեմոկրատիա*

ХАЧИК ГАЛСТЯН – *Проблема диалога в контексте политической мысли античной эпохи.* – В статье рассматривается, как эволюционировал в эпоху античности диалог – метод вести беседу и наладить коммуникацию. Утверждается, что, являясь неотъемлемой частью античной духовной культуры, диалог занимал центральное место в миропонимании древних греков. А греческая общественно-политическая мысль развивалась, активно используя диалоговые технологии как наиболее эффективный и цивилизованный механизм разрешить споры и противоречия, сочетать интересы, а также наладить сотрудничество между различными субъектами коммуникационного взаимодействия.

Ключевые слова: *диалог, диалоговое мышление, философия диалога, эристика, греческая демократия*

KHACHIK GALSTYAN – *The Problem of Dialogue in the Context of the Political Thought of the Ancient Era.* – Within the framework of the article, the author considers the evolution of dialogue development as a method of conducting a conversation and establishing communication in the context of the political thought of antiquity. In particular, the author concludes, that the dialogue occupied a central place in the ancient Greek worldview, being an integral part of the ancient spiritual culture. And the ancient Greek social and political thought, according to the author, developed through the active use of dialogical technologies as the most effective and civilized mechanism for resolving disputes and contradictions, combining interests, and establishing cooperation between various subjects of communication interaction.

Key worlds: *dialogue, dialogical thinking, philosophy of dialogue, eristic, Greek democracy*